



ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
ՄԻԱՑԵԱԼ ԼԱՀԱՆԳԱՑ ՀԱՄԱՐ  
ՏԼ. ՍԲ. 50  
Վեցամսեայ 75  
Եռամսեայ 40  
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ  
Տարեկան 10 ֆրանք.  
Բաժանորդագրին կԱՆՈՒԿ ՎՃԱՐԵԼԻ

ՀԱՍՑԷ  
To the DICKRIS PUBLISHING CO.,  
301 East 34th St., New York City  
Entered at the Post Office at New York as  
Second-Class Mail Matter.  
Խմբագրութեան ղրկուած ծրար  
կամ նամակ ետ չեն ղրկուիր:

# ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 78      ՆԻՒ ԵՈՐԳ, ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 6 1899      ԳԻՆ 3 ՍԷՆՑ

**ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ**  
Սիրա չունի՞նք. — Նամակ վա-  
նէն. — Գողթականութեան մէջ  
ճարակել սկսող բարոյական ակտե-  
րու դարձանները. — Խմբագրական  
ազգ. — Ազգային քրոնիկ. — Նա-  
մակ կիտէն. — Բողոքական. —  
Նամակ Խմբագրութեան. — Խմբ-  
ագրութեան պատասխանները. —

**ՍԻՐՏ ՁՈՒՆԻՔ**  
Սո՛վ... սո՛վ...  
Ու արուր մտածումները...  
Խանդերի ու յոյզերի պատկեր-  
ների ամբողջ ասոք մը կ'անցնի ա-  
ռաջէս: Ե՛ն օրեր, քաղցր օրեր,  
գէթ մայրական ասն խաղաղ ու  
անսյռ օրեր. ա՛խ ախոս, անդառ-  
նալի օրեր...  
Ու հորիզոն մ'իման... ամ-  
պիրը, որտեղ ու կարմիր արեան  
մէջ լողացող դժբաղդ աշխարհ մը:  
Սուրբներն իմանքին, մայրենի նոր  
մարած մոխրիւններն վրայ դժբաղդ  
մանկիկներ են կանգնած, անաէր,  
անոք, անյոյս որբեր են անոնք, ու  
կը մօտենամ բրտուճ մը հաց ապու-  
անոնք ձեռք... մե՛րկ են...  
Թայ աչքերով, կարտուած սրբ-  
առով, վիզ ծուռ ու ճմլուած կը  
վերափոխուի իմ հայրենիքս, ձեր  
հայրենիքը, յուսապաշտ սգովս կը  
լքիմ. աղէկատուր է տեսարանը...  
Վասպուրական կը մեռնի...  
Դժբաղդ աշխարհին բազմա-  
տանջ, վերաւոր ու նուազած դիա-  
կին առաջ ծուռն կը չոքիմ, — «Ո՛ր  
վասպուրական, ո՛ր արծուի սիրտդ  
թուլացաւ, մարեցաւ. ո՛վ քեզ  
լքեց»:

Ու տխուր, սրտամորմո՞ք ա-  
ղաղակը կը հասնի «Փշուր մը խաց,  
անօթի կը մեռնիմ»...  
Սով է՛. խոտ կուտեն անոնք,  
կուս կուտեն անոնք, շանջ կու-  
տեն անոնք, մոխիր կուտեն: Զիւն  
է. դաշտերը ծածկուած են. ան-  
գո՛ւթ սարի, անգո՛ւթ եղանակ.  
խոտ ալ չունին ուտելու համար:  
Ու վերաւոր կը մոնջէ վասպուրա-  
կանը... թալկացած է նա:  
Մէկը հոն կուտայ իր հուստը,  
իր սիրած ժամ ու պատարագը՝ գէթ  
անգամ մը իր օրերով սոված փորը  
կշտացնելու համար. միւսները հոն՝  
յամսաւ, բայց գովիլի, նահապետա-  
կան ուխտ մը կ'ընեն. «Անօթի կը  
մեռնինք, չենք ուրանար»:  
Ու հառաչանք կը հասնի մեր  
ականջներին. կ'իյնան, կը մեռնին,  
նոր կտորած, ու անոնց չիրիմները  
կարմիր չեն ներկուիր...:

Դժբաղդը՝ դժբաղդին վիճակը  
կըզգայ, բաղդակից թշուառը՝ իր  
բերնի բրգուճը կը կտրէ ու կը սայ  
իր մահամերձ եղբորը: Սոված վա-  
նը առաջին օրինակը կը հանդիսանայ  
ու օգնելու փորձ մը կ'ընէ. մեր  
սոհմին գեղեցիկ ճիգն է այդ, ի՞նչ  
կրնայ ընել. ժամանակները փոխ-  
ուած են, Արծուը՝ վարագի սարէն  
սլացեր՝ Մասեաց ստորոտն է հանգ-  
չեր:

Գան տարի առաջ ալ սով էր—  
սով չէր՝ սղութիւն մըն էր— ամ-  
բողջ Հայ ազգը կը շարժէր, առատ  
օգնութիւն կը հասնէր վան, նոր  
զարթնած սրտերն աւելի զգայնիկ  
էին... զօրաւոր հովանի մը կար  
հոն: Երբեք իւր գեղերի պարկը  
շալկին առած՝ սարերը կ'անցնէր ու  
վան կը մտնէր: Արծուունաց վեր-  
ջին շառաւիղն ալ կենդանի էր, ու  
իւր հայրենի աշխարհը կը յիշէր՝ իւր  
անաչառ ու պարսաճանաչ գիտակ-  
ցութեամբ:

Սով է այսօր, իսկական սով.  
անոք, անհովիւ, անպաշտպան է  
վան: Մեր ակաթիներն հասածները  
փոքրիկ մրմուռներ են... վիճակը  
անասնելի է, գործ մը ունինք կա-  
տարելիք՝ կատարենք, պարագ մը  
ունինք՝ ճանչնանք: Տխուր է հըն-  
չել, բայց վասպուրական կը մեռ-  
նի՞...  
Ու մենք հեռուոր աշխարհէ  
հանդիսատեսներ ենք. ա՛լ ի՞նչ է  
մեր պարագը, ալ ի՞նչ կրնենք՝ երբ  
օգնել չգիտենք, յուզուիլ ու զգաց-  
ուիլ չգիտենք:  
Չէ՛, չեմ յուսահատիր, մաքուր  
ու անկեղծ զգացողները արդէն մօ-  
տեցան օգնութեան սեղանին: Մեր  
Հովիւն ալ կարգաց իւր հրաւերը:  
Այլ ևս խնայելու օրեր չեն, «կեանք  
չունինք. մահէ կը վախնանք, գե-  
րեզմաննիս լեցուի փուշով»: Հապա  
ո՞ր օրուան համար պիտի ըլլան մեր  
ջանքերը և ինչո՞ւ կ'ապրինք, ին-  
չո՞ւ Հայ կանուանենք ինքզինքնիս,  
երբ մեր վերաւոր մարմինն սպե-  
ղանի գնելու չափ քաջութիւն չու-  
նինք:

Հայաստան աշխարհի սիրտը մա-  
համերձ է, կորուստը անդամանե-  
լի, ահաւոր թշնամի մըն է կանգ-  
նած մեր դրան առաջ՝ մեր կեանքին  
սպառնացող...: Սո՛վը...  
Դարձեալ տխուր պատկերներ...  
Վասպուրական կուլայ, կ'արտատուի  
ու սրտայոյզ ողբեր կը լսենք...  
վերջին մոնջիւն մըն է որ կ'արձա-  
կէ. «Փշուր մը խաց»...  
Ու կը նայիմ...  
Դէպ ի. այն սիրուն աշխարհը,  
հոգեով ու սրտով մեր զգացումնե-  
րուն հետ կ'ապուած պատմական

վայրերը, դարնան ծաղկազարդ ու  
մայրսեան զեղազուարճ շքեղ փայլ  
մ'ունենցող վասպուրական աշխարհը  
... անօթի, նուազած, կ'ախթը դար-  
ձած թշուառ հայ հայրենակիցներու  
սղարմելի ու արգահատ վիճակը...  
կը մնչնիմ՝ թախծային մեղամալ-  
ձութեամբ մը...  
Վասպուրական կը մեռնի՞...  
Հայրենաց ձայն կը հասնի մեզ:  
Սիրա չունի՞նք...:  
Վ. ՇԱՀԷՆԻ

**Ն. Ս. Ս. Վ. Ա. Ն. Է. Ն.**  
99 փետրվար 27, վան.  
Սիրելի Հայրենակից!  
Ձեռնարկուած նոր թերթիդ  
թղթակցելու հրաւերիդ սիրով կըն-  
դունիմ. ցանկալով ձեզ յաջողու-  
թիւն ու կորով որ ձեր եռանդին  
հետ յարասեութեամբ մը կրնաք  
տանիլ այդ ծանր ու ազգօգուտ գե-  
ղեցիկ ձեռնարկը:  
Ի՞նչ գրել. շփոթած, շուարած,  
գլուխնիս կորսնցուցած՝ սե օրերու  
մէջ... գրիչնիս ալ կորած է, մը-  
տածելու ընդունակութիւննիս ան-  
գամ կորսնցուցած: Օրը նոր, ցաւ  
նոր, տարա նոր. դեռ մեր սիրելի-  
ները գերեզմանի կարմիր արիւնը  
չը չորցած, անօթութենէ անչնացած-  
ների գերեզմանն է որ կը փորենք:  
Կը մեռնին հիւզով, առտով, երեսու-  
նով... տէր տիրական չը կայ: Փո-  
ղսնները լեցուն են մեր ինտական ու  
քաղաքացի եղբայրների սոված խուճ-  
րերով. «Աստուած սիրէ՛ք, բրբուջ  
մը խաց» և կը նուազին, կ'իյնան, կը  
մեռնին հրապարակի վրայ: Դպրոցի  
մէջ աշակերտներն թալկացած գէմ-  
քը, նուազած աչքերը, այն կրակուս  
ու եռուն մանկիկների սառուլը, եր-  
բնմն ալ նուազումները ինձ կը յու-  
զեն բոլորովն և կարծես թէ զիս  
գէպի յուսահատութիւն կ'առաջնոր-  
դեն: Վասպուրական երգէք այս սու-  
գի շորերը հագած չէք. հացի սովէն  
աւելի դրամի սովն է որ ժողովուր-  
դը կը մեռնցնէ: Ցորենի չափը 75—  
80 զուրուշ է. 500 զուրուշի օրեր ալ  
տեսած ենք, բայց այժմու թշուա-  
ռութիւնը ոչ մի ժամանակի հետ  
չեմ կրնար բաղդնետել: Ոչ մի ու-  
րիշ տեղէ ցորեն հասնելու յոյս չկայ.  
մեր դրացի Ատրպատական ալ սով  
կայ. Պարսկաստանէն՝ ցորեն չենք  
կրնար սպասել: Բոլոր քիւրտերն ալ  
քաղաք լեցուած՝ հրապարակի ցորենը  
ձեռքէ ձեռք կը խլեն ու գէպի Հա-  
րաւ կը աանին: Գիւղերի վիճակի նը-  
կարագիրը աղէխարշ է. խոտ ու ան-  
ընական իրեր ուտելը սովորական է  
գարձեր, այն ալ եթէ գտնեն: Գա-  
ւաշի կողմերը անօթութենէն մահա-  
ցած ամբողջ գիւղեր կան:

Դոմինիկանները պզտոր ջուր  
գտան ձուկ որսալու. կուտան դրամ  
և կը գնեն հաւատը: Գուցէ լսած էք

Այս դժբաղդութեան օրերին,  
զօրաւոր կամքի ու սովուն նկարագ-  
րի տէր հովիւ մը կ'ապաստինք ունե-  
նալ: Առաջնորդական սեղապազ Սաս-  
փան վարդապետ Աղազատեան թոյլ  
կամքի տէր, անկարող անձնաւորու-  
թիւն մ'է, թէ և չար չ'է, բայց իր-  
մէ գործունեայ մարդ մը ԸԼԼԱԸԸ  
չենք կրնար ակնկալել:  
Ի՞նչ կրնն մեր Սրբազան Հայ-  
րերը: Նորընծայ եկեղեցական մը,  
Արմաշի տաներէն Մուշէղ վարդա-  
պետ, հրաւեր կը կարգայ մեր սիգա-  
ճէմ գերապատիւներին՝ թողնելու  
Վոսփորը ու անբաղդ վանը գալու:  
Գար են. չեն շարժիր անոնք: Ուրա-  
խութեան վայրկեան մ'ունենցանք.  
Սրբ. Ալէքսիսեան կուղէր վան գալու.  
մեր սիրելի Թաշնիկը՝ Արծուի դաշին  
վրայ պիտի տեսնէինք: Վասպուրա-  
կան կը ճանչնայ զինքը, կը սիրէ զին-  
քը և իրմէ միթիթապութիւն մը կըս-  
պասէր. թէ և ջոջ աղաները, որոնց  
շարունակ քամահարող մը եղած է,  
իր անցեալ պաշտօնավարութեան մի-  
ջոցին՝ թիւում և իս մը կընդունէ-  
ին. մեր տէր պապաներն ալ ակամայ  
դող մը կ'զգային՝ անցեալ զօրաւոր  
ապաստաններն յիշելով: Բայց չը գի-  
տենք թէ բաղդը ինչո՞ւ ամեն կող-  
մէ չի թպտեր վանին. Թաշնիկը չե-  
կաւ և մեր յոյսերն ալ մարեցան:  
Այժմ՝ ներսէս եպ. Ասլանեան պիտի  
գայ. բարի՛ գալուստ մեր Սրբազա-  
նին. վեհափառ Հայրերի ու Սուլ-  
թանի նպատակներն ալ իր հետ պիտի  
բերէ. բայց վանեցիք գործ սիրող  
մարդիկ են, եթէ այդ չի սիրեր մեր  
նորեկ Առաջնորդը՝ շատ նեղութիւն  
թող չի կրէ, հոս գալու եւ վերա-  
դառնալու, ինչպէս իւր ցանկութիւնն  
է եղեր և չուզեր մշտական առաջ-  
նորդ ըլլալ, իւր ճանապարհածախս  
մի քանի սովեալների կեանքը կը  
փրկէ:

Ձեռք հասկնար թէ ի՞նչ կրնն  
Պօլի մեր Գերապատիւները. գէթ  
այժմ թո՛ղ շարժին Վոսփորէն, սովը  
անոնց չի յուզեր, ժողովուրդի լացն  
ու կոծը և մահը անոնց աչքին նշա-  
նակութիւն չունին, գէթ Լուսաւոր-  
չի փարախէն իրենց հօտն է որ կը  
խլեն, իրենց ծուխերը ու շահէ ոը  
կը պակսին:

Սե օրերը պիտի մթաղենին եւ  
գուժերը պիտի ունենանք ձեզ հա-  
ղորդելու. իցի՛ւ թէ վան այն ճըզ-  
նաժամն ալ անցունէք...:  
ԱՐՏԱՇԻՍ

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ ՄԷՋ ՃԱՐԱԿԵԼ ՍԿՍՈՂ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆՏԵՐՈՒ ԴՍՐՄԱՆՆԵՐԸ

Անցեալ թուով Գանացիք ցուցնել թէ ինչպէս անող Փիղիքական նոյնպէս ապրող բանական ու բարոյական մարմիններու փոռութիւնը և ներսուրբ տեղի կունենան կեանքի — ազդային, ընկերական, կրօնական եւ ընտանեկան կեանքի — բացակայութիւնէն. ուրեմն կեանքի գոյութիւնն է այն ներքին հասող աղբիւրը, որ կը սրբէ, կը մաքրէ մարմնոյն ստացած վէրքերը և թունաւորութիւնը, որ զանոնք կը դարձնէ, կը բուժէ:

Խոստացիք էինք շնորհ թէ ինչ չէ և ինչ չի կրնար ըլլալ փոփոքուած դարձանքի միջոցը. ուստի նախ այդ մասին մեր տեսութիւնը յայտնենք: Կրօնական կեանք ըսինք. սակայն գիտնալու է թէ ո՞ր և է կրօնք ո՞ր և է ձեր և ու որպիսութեան տակ կեանք չէ՞՝ եթէ ժողովուրդին ներկայ պահանջներուն, պէտքերուն ու ձգտումներուն գոհացում չտար, անոնց մէջ չը ներարկիր, անոնց մղում եւ առաջնորդութիւն չտար, անոնց աճելու, զօրանալու եւ բարձրանալու սնունդի տարրերը չմատակարարեր. որ և է կրօն որ իւր սիրտը չընդունէ, իւր արմատները չտարածեր ժողովուրդի ամենէն խոր վէրքերուն, ամենէն լայն պէտքերուն, ամենէն խանձաւ կարօտանքներուն, ամենէն կըրակոտ հարցերուն մէջ՝ նա օտար է, նա բռն է և նա մահացու է. ուստի մեր այն կղերականները որք ժողովուրդեան իրական կեանքի իրական, դրական շօշափելի պահանջներովը չեն զբաղիր, որք կրօնքը չեն ներկայացուներ իրր նեցուկ ժողովուրդեան փրկութեան մագլցումներուն՝ անոնք կը դառնան կրօնի փրկարար կոչումին դէմ. հետեւաբար փոխանակ թիւղիներ ըլլալու՝ պատուհաններ կը դառնան այն ժողովուրդին, որը իւր ազատութեան օրհասական ճիգին մէջ է:

Ա. Կրօնքը կենսաւէտ արեւէ մը ցոլացող եօթնարփեան ճառագայթն է. նա սիրոյ ուժը, հաւատքի հըրաշքը, յուսոյ ստեղծագործութիւնը կը բերէ. նա՝ արիւնթեան առաքինութիւնը, անձնուիրութեան սրբութիւնը, ճշմարտութեան ամենազօրութիւնը և արդարութեան յայթանակին զիտակցութիւնը կը բերէ. ուրեմն երբ ո՞ր կայ, երբ յոյս կայ, երբ հաւատք կայ, երբ արիւնթեանը, երբ անձնուիրութիւնը անոնց սեղանին վրայ կ'երգնուին, և երբ ճշմարտութիւնը իւր սուրբ՝ և արդարութիւնը իւր շանթով կը փայլեն՝ ալ հոն անկարելին լոյսին առջևէն հայտնուող խառնարին պէս՝ կը շքանայ, ալ յայթանակի ստացուցէ: Ուստի կրօնը իւր այս իտիպական դերը պէտք է կատարէ մեր ժողովուրդեան մէջ: Դիմում կրննք մեր բոլոր եկեղեցականներուն, որ կրօնի այս իտիպական կոչումին արժանի դերը ստանձնեն. յորժամ ժողովուրդը իւր սիրտը, իւր հոգին, իւր միտքը, իւր կեանքը լայն պիտի բանայ կրօնի վսեմ ներարձուներուն և կրօնական կեանքը պիտի սիրի շրջիլ շայ երակներու մէջ, ժողովուրդը պիտի ապրի անով, պիտի գործէ անով, պիտի յուսայ անով, պիտի կռուի անով, պիտի սիրէ, պիտի սպառէ պայն՝ անուանելով «Իմ կեանքս»:

Բ. Ազգային կեանքը՝ մանաւանդ մեր ազգին համար՝ եղած է ամենատարրական յատկանիշը. անով է որ միշտ երկրասարդ արիւն մը շրջան ըրած է մեր երակներուն մէջ, որով մեր վրայ յայտնարար բացուած այնքան հանգիստ վէրքերը (որոցմով մեզմէ՝ Փիղիքային տառնապատիկ աւելի հզօր ազգի՝ շատոնց տասնեակներով մեռան, կորան՝ հետք անգամ չի սղլում) բուժուցան, ակոտաճե սպիներ միայն թողով մեր վրայ, որով աշխարհակալ ցեղերու բարբարոսական սպանալիքներուն և աղէտներուն հետ խառնուած այլասեռիչ թոյներու ազդեցութիւնները չեղողացուցինք, մ'ընտանացինք զուտ Հայ՝ մաքուր Հայոց լիզումով, Հայ կրօնով, Հայ սրբութիւններով, Հայ աւանդութիւնով. նոյն այդ կեանքն է որ այս օր իւր փրկարար դերը պիտի կատարէ ուրիշ թունաւորութիւնը, ուրիշ այլասեռութիւնը, ուրիշ վէրքերու դէմ. ուստի վստ պահենք, ուրիշ պահենք, բարձր պահենք մեր ազգային կեանքը: Ազգային յոյսերու կրակն է որ միշտ վստ պիտի պահէ մեր ազգային կեանքը. ուստի միշտ արժարձուն պահենք մեր ազգային յոյսերը. պիտի վերականգնենին, պիտի վերաշինուին մեր Հայրենիքի աւերակները, պիտի հալածուին սոփեւ ու սուրբ մեր սիրելի երկրէն. մեր որբերն օր մը երջանիկ՝ հայրեր ու մայրեր պիտի ըլլան. օր մը Հայաստանի Արմիւր իւր գորովալից ու յայթանակութեան պիտի տարածէ մեր արիւնաների լեռներուն ու դաշտերուն վրայ. պիտի ծաղկին, պիտի բարգաւաճանան անոնք, որոց մէջ Հայութիւնը խնդապատատ ու պանծալի կենցաղ մը պիտի ունենայ: Կրկնէն, Քիւսան և Փիլիպեան կղզիները իրենց արիւնաների աւերակներուն մէջէն բարձրացուցած ազատութեան դրօշներու փառապանծ ծաղիքներէն յուսոյ ոգևորութիւնը թող տարածեն մեր վրայ. յուսանք, ճգնինք, գործենք:

Գ. Ընկերական կեանք մը ստեղծուելու է Ամերիկայի հայոց մէջ. ընկերական յորդորներու, խրատներու, թեղաբերութիւններու, յանդիմանութիւններու, խրատու-

անքներու, հմտութիւններու, ազնիւ ներշնչութիւններու և սրբագործ ազդեցութիւններու փոխադարձ հաղորդակցութիւնը պէտք է գոյութիւն ունենայ մեր մէջ. մարդիկ իրարու լրացուցիչներն են. պէտք է որ իրարմով շինուած, իրարմով սրբազուած, իրարմով անած, իրարմով դրդուած ու մղուած, իրարմով առաջնորդուած ամբողջական կեանք մը ունենանք: Մարմինները զանազան տարբերութիւնով կը կազմուին. այն մարմինը, որ մենք ունինք, բաղկացած է շատ մը տարրերէ. երբ այդ տարրերն իրարմէ բաժնուին՝ մեր էութիւնը գոյութիւն ունենալէ կը դադարի. այնպէս ալ անհասանք՝ զանազան ձևերով, զանազան յատկութիւններով, զանազան ընդթիւններով, զանազան ձգտումներով, վերջապէս հոգեբանական զանազան վիճակներով ունինք. անոնց ամենուն մէկտեղ գալով և միասին կազմակերպուելով է որ յառաջիմութեան, ազնուացման և բարձրացման մարդկեղէն արարչագործ մեծ մարմինը կը կազմուի. այդ շատ մը կեանքերով շարուած մէկ մեծ կեանքն է որ կարող կըլլայ իւր մարմինը առողջ ու զօրաւոր պահելու՝ փոռութիւններու և նեխումներու դէմ, ու նոյն ասան՝ գործօն վիճակ մը կունենանք: Մեր հարուստները, մեր գործաւորները, մեր զարգացածները, մեր անուաները, մեր օրիորդները, մեր ախիւնները, մեր երկտասարկները, մեր ձերերը և այնպիսիք և յիշատակականը, պահպանողականը և ազատականը՝ ասոնց ամենը տեղ մը ունենալու են, ուր երբեմն միասին գան՝ Հայրենեաց տաք շունչով իրարու հետ շարուելու և զիրար բարխառնելու: Այո՛, ընկերական բարեխառնումի մը պէտքն ունինք, զի այսօր տեղով մը բռնուած ենք. ուստի տեղաւոր կրօնամուտ, այլք տեղաւոր անկրօն. ուստի տեղաւոր յեղափոխական, ուրիշներն անկողար հակափոխական. ուստի տեղաւոր արմատականներ, ուրիշներ տեղաւոր պահպանողականներ ևն: Տեղա, տեղա, տեղա... : Այս է պատճառը Հայոց մէջ գոյութիւն ունեցող այնքան մոլորիչ հակառակութիւններուն, վէճերուն և կռիւններուն. իրարու խօսք չենք հասկանար, իրար չենք պատուեր, զիրար կը նախատենք, իրարու մուր կը քսենք միշտ՝ մոլորեցնօրէն: Բարեխառնութեան պէտք ունինք, և այս բարեխառնութիւնը կը ձեր հայկական ընդհանուր ընկերակցութիւններով: Հոս է որ զստույթիւն, խոնարհում և հեզութիւն պէտք են. հոս՝ աւելի ազնիւ ու բարձր ներկատուներով իրարու անհամակութիւնները պիտի տանինք, իրարու յանցանքները պիտի ներենք, իրարու թեթութիւնները պիտի լրացունենք, իրարու բռնք պիտի կըրենք և այս փոխադարձ ծառայութիւններովն է որ իւրաքանչիւր պիտի ընդունինք ազնուացման նոր թափ, նոր ուժ, նոր սիրտ՝ թէ գեղեցիկ անք ինչ մասնաւոր դեր ունի կատարելիք մեր ընկերական կեանքին մէջ՝ հոս տեղաւոր անհակութիւնը շնորհիւ ըստ պարտ ու պատշաճին զըրկու. ուրիշ առթիւ այդ խնդրոյն անմասնոր յօգուած մը կը նուերենք:

Դ. Ընտանեկան կեանքը ամենէն անընթաց ինդիւն է Ամերիկայի հայոց համար. այս կեանքի բացակայութեան ճնշած շարիքները շատ յայտնի են. սակայն ինչ կըրենանք ընել: Իհաստ մը կար՝ որ մենք սկզբունքով հակառակ էինք հայերուն հոս ամուսնանալու և կամ իրենց ամուսնիները բերելուն. իսկ այժմ՝ երկու շարքացի փոքրագոյնը ընտրելու խոհմութիւնով՝ կը խորհինք թէ լաւ է որ Հայ երկրասարդներն ջանան ընտանիք կազմելու: Անոնք որ չեն ուզեր կամ չեն կրնար ամուսնանալ՝ կրկին սղէի բան մը կընեն՝ եթէ Հայ ընտանիքներու մէջ ապրին: Ծառայարաններու գրութիւնը և խոսքի խոսքի սղայմարդերու միասին բնակելու շարիքը յայտնի է:

Եթէ Հայ ընտանիքներն ինքնակամ չափէն վեր նկատուում՝ յանձն առնեն իրենց յարկերուն տակ հովանաւորել Հայ երկրասարդները, իրարցական մեծ գործ մը կը կատարեն: Այլ առթիւ կրկին կը դառնանք այս հարցին և կը հետեւինք անոր գործադրմանը:

Եթէ այս նիւթին վրայ հմտալից յօդուածներ զրկուին մեզ, հաճութեամբ պիտի հրատարակենք:

Գ. Պ. ՉԻԹՃՆԱՆ

ԽՐԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Շան մը տեղերէ մեզ կը գրեն թէ՛ նիւ Եորք հրատարակուող «Հայրենիք» անուն թերթը ո ս է կերպով առնչութիւն ունի՝ ՏԻԳՐԻՍԻ Հրատարակչական մարմին հետ: Թէ և մենք այդ թերթը ոչ ստացած ենք և ոչ ալ տեսած, սակայն որպէս զի այդպիսի սխալ հասկացողութիւններու տեղի չը տարուի և ապագայի ամեն կարգի անպատեհութեանց առաջն առնուի, այժմէն կուգանք պաշտօնապէս յայտարարել ՏԻԳՐԻՍԻ ընթերցողներուն՝ թէ ո՛ր և է կապ կամ առնչութիւն չը կայ ՏԻԳՐԻՍԻ եւ այս թերթի խմբագրական մարմիններու միջև և թէ այս երկու հրատարակութիւնները պէտք է չփոթել իրար հետ:

ԽՐԱ. ՄԱՐՄԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՉԷԹՈՒՆ

Չէթոնի նպատամատոյց յանձնարարութեան ընդհ. Գանձապետը ստացի է 50 սուրբ Ծրէզնօէն և 20 սուրբ Նիւ Հէյմօնէ՝ Տիար Քէպպապեանէ, որուն մէկ փոքր մասը միջանդի րարեկամներէ առած է:

Վ Ա Ն

Վանի սովետի համար հեղափոխութեան կողմէն նպատակներ կը հասնին Վան. աչքի իյնալիքն այն է որ ցայսօր թիւրքի գծադր լուծին տակ գտնուողները աւելի շուտափոյթ և առատ օգնութիւններ կը հասցնեն իրենց սովետական հայրենակիցներին:

—Անգղիոյ մէջ րարեկէր անձնութեան հաւաքեալ 1600 լիրայ՝ Վանայ բողոքական քարոզչաց զրկուել է՝ կարօտելոց բաշխելու համար:

—Քէօնիոյ առաջ. անգղապահ՝ Ուշաքի մէջ Վանայ կարօտելոց համար 343 զրշ. հաւաքեր Պատրիարքարան զրկուել է:

—Լոնտօնէն րարեկէր ազգային մը 5 անգ. ոսկի զրկուել է Վան՝ Տիար կարապետ կիւլպէնկեանի ձեռքով:

—Սեւանիէ 40 ոսկի զրկուել է՝ Վանայ կարօտելոց համար. իսկ Տըրքալիզօնէն՝ 20 ոսկի:

—Եգիպտոսէ մեզ կը գրեն, որ հոն հանգանակութեան մը ձեռնարկուած է Վանի սովետից համար և 4—500 ոսկի համար կը յուսացուի: Պարսկաստանէ մէջ ալ հանգանակութեան ձեռնարկուած է: Տեղեկներ թէ այս պարագային ինչ պիտի ընեն մեր Ռուսահայ եղբայրները, մանաւանդ Պաքուի նախահարկի կրօնաստիները:

—Վանի մէջ 4 տարիէ իվեր հաստատուած նպատամատոյց գործատուներն կ'օգտուին 4200 հոգի՝ մեծ մասամբ կիները՝ թիւ մանկով ու ճարտարագործութեանը՝ 800 ընտանիք՝ կտուազործութեամբ և 6՝ ներկարարութեամբ: 450 տուն հացի նըպատակ կընդունին: Երեք ամսի մէջ 246,000 զրուշ արժողութեամբ տեղական արդանք բաշխուած է. չըրկուկայ զրկուելու կարօտայիններին: 43000 զրուշի ապրանք՝ քաղաքի կարօտեալներին:

ԲԱՂԷՇ

Կ. Պօլսէն կը գրէ «Րիւզէրի» թղթակցից.

«Րիւզէրի մէջ՝ սուրհանդակով առնուած լուրերուն նայելով՝ խառնակութիւն կը տիրէ: Պայրամի ասան իտալիներուն վարմունքը դէպի Հայեր շատ թշնամական է եղեր: Փետրվար 18ին ոստիկանները պաշարելով սուրհանդէսին՝ կը փորձեն ներս մտնել, բայց պատուհաններուն մէկէն ընկնելով կը հարուստ մը կը պայթի և զինուորներէն միւն զիտապատ գետին կիչայ. ասոր վրայ միւսները փութով ետ կը քաշուին: Կարծելով թէ զօրքերը բոլորովին մեկնած էին, մարդ մը տունէն դուրս կը կնի, բայց զինուորները, որոնք պահուցուած էին, կը գարնեն գանի: Տանը մէջ ուրիշ ոչ ոք կը գտնուէր՝ բայց եթէ պատու մը, որ կը ձեռքաւորուի: Հաստատուեցաւ թէ զարնուածը երկրասարդ Հայ մըն էր, որ երկու տարի ստատուահման գտնուած էր. եւ զեռնոր վերադարձած: Տանը շրջակայքը ընակող հայերէն տառնի չափ մարդ ձեռքաւորուցան այս դէպքին վրայ, բայց յետոյ արձակուցան, որովհետեւ ո ս է փաստ չկար իրենց դէմ: Ոճրագործութեամբ ամբաստանուած բոլոր իւլաններն բանտէն արձակուած են»:

ՏԻԳՐԱՆԱԿՆԵՐՏ

«Սթանապոլ» տեղեկութեանց նայելով, վերջերս Տիգրանակերտի

իրաւաններուն մէջ դաւադրութիւն մը երևան հանուեր է: Պարագլուխ իսլամները ձերբակալուեր և Կ. Պօլիս տարուեր են Կատուելու համար, իսկ Կ. Պօլիս գտնուող Տիգրանակերտցիները խիստ հակողութեան տակ առնուեր են: Երկրին մէջ ահաբեկութիւնները անպակաս է:

—Պ. Ջանչեանը իր հրատարակած առևտրէն «Եղբայրական Օգնութիւն» գրքի հասոյթով շարժողք որբանոց մըն ալ պիտի բանայ Տիգրանակերտի մէջ:

ԽՍՐԲՆԻՐ

Խարբերդէն մեզ կը գրեն թէ՛ Պատ. Պարնըմ շատ սիրով արտօնած է որ Լուսաւորչական որբերը կանոնաւորապէս մայրենի եկեղեցին յաճախեն ու լուսաւորչական եկեղեցական մ'ալ շարաթը մի անգամ որբանոցները այցելէ՛ կրօնական դասեր աւանդելու: Սակայն կարգ մը խաւարամիտներ՝ դեռ ասով ալ չգուհանալով՝ կը վարկեն թէ որբերը «Փրոտ» պիտի ըլլան. ուստի որբանոցներէն շատ մը որբեր դուրս կը հանեն և կը թողուն որ արգէն փողոցները թափառող մերկ, անօթի, անասուն և անխնամ հարկաւորներ որբերուն շատ անոնք ալ թափառին՝ զրկուելով կրթութենէ, դաստիարակութենէ և խնամքէ:

Այս մարդիկը նոյն իսկ թիւրք կառավարութեան պատճառանքներ կուտան որ որբանոցները փակէ: Ի՞նչ կուզեն ասոնք. ասանկով ի՞նչ մարդասիրական կամ ազգասիրական գործ կատարած կըլլան: Այդ վարմունքը ազգասիրութենէ աւելի սոսկալի է. ո՞ճիր է:

ԹՂՍԱԿՑՈՒԹԻՒՆԻՐ

ՆԱՄԱԿ ԼԻՆԷՆ

Ապրիլ 28.

Հանրային գործունէութեան շարժում մը կը տեսնուի հաս. դիակ անդամներ կը շարժին, մտքերի մէջ կայծի պլպլումք մը կը տեսնուի: Տեղական ու ազգօգուտ գործերին անասարքեր ու ստան ժողովուրդը մէկ երկու ամսէ ի վեր ձեռք ձեռքի բերելէ զատ՝ որտեք ալ մտանցներու ջանք կայ: Ետքումներ առաջ վաղի նակ վարդապետի նախագահութեան ներքեւ Ազգ. Հոգաբարձութիւն մը կը կազմուեցաւ լուսաւորչական և բողոքական ազգայիններէ՝ առանց կրօնի խտրութեան: Լինի ժողովուրդը այդ յարանուանական բժանիչութիւններուն՝ մագէ շապիկներ հագցուցած «անապատ» զրկած է ձգնելու ու հոն մեռնելու: Ետքում շարժումը Հոգաբարձութիւնը եռանդ մը ցոյց կուտայ. գրադարան, լուսարան, վերջապէս ժողովուրդի զարգացումը իւր նպատակակէտէն ընտրած: Անցեալները վանի միտիտներ Մր. Ալէն խօսեցաւ տեղոյս Լի հօլին մէջ. աչքերս փնտռեցի կընայէի թէ իրաւ միտիտներ մէ, ու անոր բերնէն է որ կը լսեմ մեր ժողովուրդի ցաւերուն այնքան սիրովիչ ու այնքան խրախուսիչ խօսքերը, որ մեր երակներուն մէջ ոյժ ու կրակ կը ներարկէր, երբ կըսէր. «Եւրոպայէն յոյս կըտրած և ձեռք վրայ դրած եմ, Հայցեղին, Հայ տարրին ճիգերուն վրայ»: Այնչափ կոկիկ ու մաքուր հայերէն կը խօսէր, որ կը թելադրէի մեր պատուելիները և սօքթէօրները իրմէն հայերէն սորվէին:

\* \* \*

Անցեալ Կիրակի տեղոյս Եպիսկոպոսականաց Ս. Ստեփաննոս եկեղեցոյ մէջ Մաշթոց վարդապետ Լինի Լուսաւորչական եկեղեցոյ կազմակերպութեան հիմերը գրաւ եւ հինգ տնգամէ բողոքացեալ Հոգա-

բարձութիւն մ'ալ ընտրեց: Յետոյ Պատրիարքարանի շրջաբերականով վանի սովեթոյ հանգանակութիւն մը բացաւ, որ 57 սորաբի հասաւ:

Նոյն երեկոյն դարձեալ Փրովիտէնս հօլի մէջ լսարան ըլլալով՝ Լըյեցիներ Պատ. Սաչատուր Կէնէեանի ազգու ատենախօսութիւնը, որ կը ներշնչէր ժողովուրդի մտքի մէջ ազնիւ գապարտները և օգտակար թելադրութիւնները: «Միտքը բացատրելով ըսաւ. «միտքն է որ կուտենք, միտքն է որ կը հագնինք, միտքն է որ կը բնակինք»: Պատ. Պէնէեանի քանախօսութիւնը խոր տպաւորութիւն մը թողուց և այդ զգայուն ազգեցութեան տակ՝ կէսօրուայ հանգանակութիւնը շարունակուեցաւ և 57 սորաբը թելադրուեցաւ 100 ի հասցունել, սակայն հանգանակութեան ատեն՝ վանի թշուառ սովեթները կացութեան զգայնիկ ժողովուրդը իր նուէրին մէջ իրար գերազանցելու բարի նախանձ մը ունեցաւ և արդիւնքը երկու հարիւր սորաբն ալ անցաւ:

Հանգանակուածը անմիջապէս Պատրիարքարան պիտի դրկուի, որովհետեւ կարիքը խիստ անմիջական է, իսկ հանգանակութիւնը՝ ճաշարանները և առնները պիտի շարունակուի: Դեռ շատ բաներ կը յուսանք: (\*) ԿԱՐՍՊ

Ք Ա Ղ Ա Ք Ա Ա Ն

Յրաններէն «Էօվըր օէ Գէօլ օ՛Սօրիտն» հանդիսի խմբագիր Հայր Ետրմիտան՝ ամենահայրենասէր Ֆրանսացին է և յայտնի իւր թէ՛ Հայաստան և թէ՛ դաշտականներին հասուցած նպատակներովը, այժմ Պէրլիների դաշնագիրը ստորագրող մեծ պետութեանց Հայաստանի այժմու թըշուառ վիճակի տեղեկագիր մ'է ներկայացուցեր և սրտայոյզ կոչ մ'է րբեր:

Հայր Ետրմիտան իւր կոչին մէջ կը պատկերացնէ Հայաստանի ներկայ ազգանպասի կացութիւնը, և շատ ճիշդ կը նկատէ որ թուրքերը այժմ մի օրուան մէջ չեն կոտորեր հայերը, այլ գաղտնի և սիսթեմատիկօքսար բնաջնջում մըն է, հայածանքի էն վայրագ ու էն սոսկալին: Թուրքը՝ Եւրոպայի չափազանց չյուզելու համար, կընէ գանդաղօրէն, բայց անվրէպ դէպի իւր շար նպատակ դիմելով: Ժամանակ է ազգու միջոցներ ձեռք առնելու և կարճ միջոցի մէջ ազատելու Հայը այս ահաւելի կործանումէն: Եթէ կառավարութիւնները անգործ մնան այս ժողովուրդի ճգնաժամին, կ'ընէ Հայր Ետրմիտան, Հայնրային կարծիք — այն մեծ վեհապետը, որ յաճախ աւելի հզօր է քան պետութիւնները — պէտք է իր ձեռք առնէ հարեւտահարուած Հայկական դատը և պարտաւորեցնէ — նոյն իսկ ոյժով — պետութիւնները՝ գործելու յանուն մարդկութեան իրաւունքի:

Հայր Ետրմիտանի կոչը, եթէ ըլլանաւ չազդէ պետութիւնները վրայ, գէթ հանրային կարծիքն կը պատրաստուի մի օր բողոքելու անիրաւութեան դէմ:

Առ հասարակ Եւրոպայի մէջ հանրային կարծիքը հայկական վերջին օրերիս թշուառութեան պատճառաւ:

(\*) Համբընտի, Պրիւճ Ուօքըրի եւ Լինի ժողովուրդի նախաձեռնութիւնը կը գովենք և դիմում կընենք Միացեալ Նահանգաց հայութեան զգացումներուն, որ կարեկից գտնուելով վանի անբաղդ սովեթները վիճակին՝ փութան օգնութեան հասնիլ և չի խնայել իրենց նուէրները:

ԽՄԻ.

աւելի յուզուած է: Յրանական եւ Անգլիական լրագրներ երկար խմբագրականներ նուիրած են մեր գատին: Ուէսթմինսթրի գուբան ալ կոչ մը ուղղած է Եւրոպային՝ նոյն յուզիչ շեշտերով:

—Մանիլայէն եկած վերջին լուրերը շատ քաջալերական են: Կերեւի թէ ապստամբ բանակը լքում ունեցնի է: Անոնք իրենց թուոյն վրայ մեծ հաւատք դրած ու ընդհակառակն ամերիկեան զօրքերուն կըռուելու անընդունակ ըլլալուն հաւատացած էին. սակայն անդի ունեցած ճակատամարտներու արդիւնքները այդ մտածումները հիմնովին յեղաշրջեցին: Վերջին պատերազմներէն միոյն մէջ ամերիկեան զօրաց մէկ հրաշալի արարքը բոլորովին ա՛ն դողով լեցուց ապստամբները: Գնաի մը դիմացի եզերքը թշնամոյն ստուար բանակը պատերազմի խիստ զօրաւոր դիրք մը բռնած կեցած էր, Ամերիկեան բանակը գետը մտաւ և զարմանալի ճարպիկութիւնով ու զիւցաղնութիւնով՝ ռումբերու եւ գնդակներու տարափին տակէն ցամաք ելաւ ու ի փախուստ մղեց ապստամբները:

Ակուրնալաօ բարձրովին յուսահատած կերեւի և կը փախաքի որ խաղաղութիւն ըլլայ: Ապստամբ բանակին հրամանատարը՝ զօր. Լուեա, իր կողմէն զօր. Օթիլին ներկայացուցիչներ զրկեց և անկէ խաղաղութիւն խնդրեց՝ խոստովանելով որ ինքզինքնին պարտաւոր կըլլաւ: Լուեայի ներկայացուցիչները ընդհանուր հիացում յայտնեցին ամերիկեան զօրաց քաջագործութիւններուն և մասնաւոր հիացում՝ անոնց գետը անցնելու սիրաբործութեանը վրայ: Ապստամբ բանակին ներկայացուցիչներու խնդրին էր՝ որ 15 օրուան դիմադրութիւն մը արուի, որովհետեւ Մայիս 1ին ապստամբաց քոնկրէտը ինչպէս պիտի գումարուի, թող այդ ժողովը որոշէ իրենց անձնատուր ըլլալը, որպէս զի բանակին պատիւը չլինայ: Սակայն զօր. Օթիլի պատասխանեց թէ՛ ինք Փիլիպան արշակալուսին մէջ բացի Ամերիկեան կառավարութեան՝ ուրիշ որ և է կառավարութիւն կամ քօնկրէս է ճանչնար. հետեւաբար կամ ապստամբ բանակը անպայման կերպով անձնատուր կըլլայ և կամ կուրը կը շարունակուի: Լուեայի ներկայացուցիչները ետ գացին՝ իրենց պետին նոր հրահանգով վերադառնալու: Դարձան նոյն խնդրանքովը ու ըստ առաջնոյն՝ մերժուեցաւ իրենց զինադուլի առաջարկին հետ ներկայացուցած խաղաղութեան խնդրերը:

—Հոլանտա գումարուելիք Ձէնընկեցութեան համաժողովին Մ. Նահանգաց ներկայացուցիչները երէկ ճամբայ ելան: Ուրախալի է լսել թէ այդ ներկայացուցիչներուն գլխաւորն է Բըլըմպիլըն համալսարանի նախագահ՝ հայասէր Սէթ Լօ:

ԿԱՐՆԻՈՐ ԱՁԳ

Վիճակիս բարեխնամ Առաջնորդ Գեր. Տ. Յովսէփ Եպիսկոպոս Սարաճեան յառաջիկայ Կիրակէ հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցանէ Ս. Ոսկեբերան եկեղեցոյ մէջ՝ ի հոգեւոր մխիթարութիւն բարեպաշտ ժողովուրդեան:

Բաղաբեր և շրջակայից բոլոր ազգայինք հրաւիրեալ են ներկայ գտնուիլ:

ԱՁԳ. ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ 5 Մայիս, 1899 Նիւ Եորք

ՆԱՄԱԿ ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Մայիս 1, Նիւ Եորք. Յարգոյ Խմբագիր! Կը խնդրեմք հաճեցէք ձեր թերթի մի անկիւնը գեղեցիկ թանգարանի Միութեան հետեւալ տեղեկութիւնը:

Անցեալ Ապրիլ ամսոյ 1-ին Թանգարանի Միութեան ինպատ ընթերցարանի արուած Հանդիսին զուտ հասոյթը եղած է 85 սորաբ, որը կը փութանք տեղեկացնել Միութեանս բոլոր անդամոց և համակիր բարեկամաց, յայտնելով մեր շնորհակալութիւնը:

Շատ մը օգտակար նոր գրքեր յանձնարարուած են և շուտով պիտի սացուին. կը հրաւիրենք ընթերցող հասարակութիւնը որ փութայ ընթերցարան յաճախել:

145 Իսթ, 23րդ Փողոց. Ամառուան տոթիւ, յետ այսու, Թանգարանը բաց կըլլայ Հինգշաբթի երեկոյները ժամը 7½-էն մինչև 9½. Իսկ Կիրակէ օրերը՝ առաւօտեան ժամը 10½-էն մինչև 1 ր:

Ի Դիմաց Խնամակալութեան (Թանգարանագետ) Ղ. ՊՅԱՆՆԱՆ

ՄԻՋՐԱՆ ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ

M. Harpootlian, P. O. Box 470, Worcester Mass.

Մեր տան սեղանաւորական ճիւղը՝ իր ձեռամբ դրամ զրկողներէն գնահատելի կերպով քաջալերեալ պարտք կը սեպէ յայտարարել թէ մինք ևս պէտք եղած զոհողութիւնը չենք զլացած գործին միջոցաւ ապահով միջոցներ յառաջ բերել, որպէս կ'ապացուցանէ մեր անցեալ տարիներու գործունէութիւնը: Հայ ժողովուրդը եւս մասնաւորապէս մեր տան անձնատուրներուն իրական վտանգութիւնն աւրու համար պէտք է յիշել թէ՛ ՅԱՐՈՒԹԻՒՆ, ԵՒ ԵՂՏԱՐԱՐ ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ ան՝ երկրին մէջ ունեցած առաւել քան 10,000 օսմ. ոսկեյ տնջարժ ստացուածքը իր սոյն փոխանակողը գործոյն երաշխաւորութիւնըն է, յաշտ անոնց որոնք կուզեն զրամիսն վտանգելի միջոցով զրկել: Ուստի կը յուսանք թէ Հայ հասարակութիւնը չ'պիտի վարանի իրիւ ապահովագոյն միջոցը՝ մեր ձեռամբ զրկել իւր դրամը, որ կրնանք փոխանակողը առ Սարբերդի, Տիգրանակերտի, Բիւրի, Բաղուի, Բերդի, Մալաթիայի, Սեւազի, Կ. Պօլսի, Նաև Տաճ. բոլոր քաղաքաց համար. (ինձ գրամ զրկողներն ապահովութեան համար՝ Նէշընըլ Պանքի չէք և կամ մընի օրտըր զրկելու են):

Հայրենիքի մէջ ո՛ր և է գործ տեսնելու կամ գործաղբումս օգնելու համար՝ պատրաստ եմ եզրու Յարութիւն էՔ.ի ձեռամբ կատարել տալ:

Մ. ԹԱՃՃԵԱՆ ԿԸ ՎԱՃԱՌԻՇ



Փառակազ մը 1.00, Լաթակազ մ՝ 75, Թղթակազ մ՝ 65 սէնթ և Թղթակազ մ (առանց պոստկերի) 50 սէնթ: Մեծ քանակութեամբ գնողներու համար կը զեղծուի: Կը վաճառէ նաև Բաֆֆիի գրքերը՝ սովորական գնով: Դիմել յիշեալ հասցէին: 251 William St, New York Ուստի հայերը կրնան «Սրինգ» գնել նաև Պրն. Գրիգոր Մարգարեանէ՝ 167 Summer St.

